Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2018 թվականի փետրվար 19-ի
N 17 -Ն որոշման

# ԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ,ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ,ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ

### Ի.Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Գյումրի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման,ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:
2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Գյումրի համայնքի ավագանու որոշումը:
3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

### II.Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

1. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձիք:
2. Աղբահանության վճար վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վարվի նաև համապատասխան համակարգչային ծրագրով:
3. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացնում են Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և (կամ) Գյումրի համայնքի ավագանու որոշմամբ նման լիազորություններով օժտված օպերատորը կամ այլ կազմակերպությունը (կազմակերպությունները):

## III.Աղբահանության վճարի հաշվարկումը

**1.**Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է.
Կենցաղային աղբի համար՝
ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար յուրաքանչյուր ամիս՝ 100 ՀՀ դրամ:
**2.**Խանութների (մթերային,տնտեսական և կենցաղային քիմիայի ապրանքներ վաճառող) համար՝
**1)**30 (երեսուն)-ից 50 (հիսուն) քառակուսի մետր մակերես ունեցողների համար՝ քանի որ հաշվարկված է,որ մինչև 50 (հիսուն) քառակուսի մետր մակերես ունեցող սույն խմբին պատկանող խանութը ամսական առնվազն կարող է առաջացնել 1.0(մեկ)խորանարդ մետր աղբ՝ 3000 ՀՀ դրամ,
**2)**50 (հիսուն) քառակուսի մետր ընդհանուր մակերեսը գերազանցող ընդհանուր մակերես ունեցող խանութների համար՝ գերազանցող յուրաքանչյուր 1 (մեկ) քառակուսի մետրի համար լրացուցիչ, քանի որ հաշվարկված է, որ 50 (հիսուն) քառակուսի մետր մակերեսը գերազանցելու դեպքում գերազանցող յուրաքանչյուր 75 (յոթանասունհինգ) քառակուսի մետր ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել լրացուցիչ 1(մեկ) խորանարդ մետր աղբ ամսական՝ (հաշվարկել 1 քմ. 40 ՀՀ դրամ):
**3.**Մինչև 30 (երեսուն) քառակուսի մետր մակերես ունեցող տաղավարների և խանութների համար՝ 1500 ՀՀ դրամ:
**4.**Շինանյութի, ծաղիկ-ծաղկեպսակի խանութների համար՝
**1)**մինչև 50 (հիսուն) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողների համար՝ քանի որ հաշվարկված է,որ մինչև 50 (հիսուն) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող սույն խմբին պատկանող խանութը ամսական առնվազն կարող է առաջացնել 1.4 (մեկ ամբողջ չորս տասնորդական) խորանարդմետր աղբ՝ 4000 ՀՀ դրամ,
**2)**50 (հիսուն) քառակուսի մետր մակերեսը գերազանցող ընդհանուր մակերես ունեցողների համար՝ գերազանցող 1(մեկ) քառակուսի մետրի համար լրացուցիչ, քանի որ 50 (հիսուն) քառակուսի մետր մակերեսը գերազանցելու դեպքում գերազանցող յուրաքանչյուր 60 (վաթսուն) քառակուսի մետր ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել լրացուցիչ 1(մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 50 ՀՀ դրամ):
**5.**Այլ խանութների համար (վերոգրյալ կետերում չնշված)՝
**1)**մինչև 50(հիսուն) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող խանութի համար,քանի որ հաշվարկված է, որ մինչև 50 (հիսուն) քառակուսի մետր մակերես

ունեցող սույն խմբին պատկանող խանութը ամսական առնվազն կարող է առաջացնել 1.0 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ 3000 ՀՀ դրամ,

**2)**50 (հիսուն) քառակուսի մետր ընդհանուր մակերեսը գերազանցող ընդհանուր մակերես ունեցող խանութների համար՝ գերազանցող յուրաքանչյուր 1 (մեկ) քառակուսի մետրի համար լրացուցիչ, քանի որ հաշվարկված է, որ 50 (հիսուն) քառակուսի մետր մակերեսը գերազանցելու դեպքում գերազանցող յուրաքանչյուր 75 (յոթանասունհինգ) քառակուսի մետր ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել լրացուցիչ 1(մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 40 ՀՀ դրամ):

**6.**Դեղատների (բացառապես գործունեության ընթացքում առաջացող կենցաղային աղբի համար, որը չի ներառում վնասակար թափոնները) համար՝

**1)**մինչև 20 (քսան) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող դեղատան համար,քանի որ հաշվարկված է,որ մինչև 20 (քսան) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող դեղատունը ամսական առնվազն կարող է առաջացնել 1.0 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ 2000 ՀՀ դրամ,

**2)**20(քսան) քառակուսի մետր ընդհանուր մակերեսը գերազանցող ընդհանուր մակերես ունեցող դեղատների համար՝ գերազանցող յուրաքանչյուր 1 (մեկ) քառակուսի մետրի համար լրացուցիչ, քանի որ հաշվարկված է, որ 30 (երեսուն) քառակուսի մետր մակերեսը գերազանցելու դեպքում գերազանցող յուրաքանչյուր 60 (վաթսուն) քառակուսի մետր ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել լրացուցիչ 1 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ ՝ (հաշվարկել 1 քմ. 50 ՀՀ դրամ):

**7.**Վարսավիրանոցների,գեղեցկության սրահների, կենցաղային իրերի վերանորոգման արհեստանոցների և այլ կենցաղային սպասարկման օբյեկտների համար /մասնագիտական աշխատող/, քանի որ հաշվարկված է,որ յուրաքանչյուր 3 (երեք) մասնագիտական աշխատող յուրաքանչյուր ամիս կարող է առաջացնել առնվազն 1 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ 1000 ՀՀ դրամ:

**8.**Բենզալցակայանների համար, քանի որ հաշվարկված է,որ յուրաքանչյուր 1.0 (մեկ) խողովակով սպասարկման արդյունքում մեկ ամսվա ընթացքում առնվազն կարող է առաջանալ 0.7 (զրո ամբողջ յոթ տասնորդական) խորանարդ մետր աղբ՝ 2000 ՀՀ դրամ յուրաքանչյուր լիցքավորման խողովակի համար:

**9.**Գազալցակայանների համար, քանի որ հաշվարկված է, որ յուրաքանչյուր 1.0 (մեկ) խողովակով սպասարկման արդյունքում մեկ ամսվա ընթացքում առնվազն կարող է առաջանալ 1.0 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ 3000 ՀՀ դրամ յուրաքանչյուր լիցքավորման խողովակի համար:

**10.**Ավտոտեխսպասարկման կայանների համար, քանի որ հաշվարկված է,որ յուրաքանչյուր մեկ սպասարկման կետը մեկ ամսվա ընթացքում առնվազն կարող է առաջացնել 1.0 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ 3000 ՀՀ դրամ յուրաքանչյուր սպասարկման կետի համար:

**11.**Հասարակական սննդի և զվարճանքի օբյեկտների (ռեստորան,սրճարան,արագ սննդի օբյեկտներ, ճաշարան, բար,դիսկո-բար,գիշերային ակումբ, բիլիարդ, խաղային ատրակցիոններ և այլն) համար՝

**1)**մինչև 100 (մեկ հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար, քանի որ հաշվարկված է, որ մինչև 100 (մեկ հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտը ամսական առնվազն կարող է առաջացնել 2.70 (երկու ամբողջ յոթանասուն հարյուրերորդական) խորանարդ մետր աղբ՝ 8000 ՀՀ դրամ,

**2)**100 (մեկ հարյուր) քառակուսի մետր մակերեսը գերազանցող ընդհանուր մակերես ունեցող օբյեկտերի համար՝ գերազանցող յուրաքանչյուր 1 (մեկ) քառակուսի մետրի համար՝ լրացուցիչ, քանի որ հաշվարկված է,որ 100 (մեկ հարյուր) քառակուսի մետր մակերեսը գերազանցելու դեպքում գերազանցող յուրաքանչյուր 75 (յոթանասունհինգ) քառակուսի մետր ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 40 ՀՀ դրամ):

**12.** Հյուրանոցների, մոթելների համար, քանի որ հաշվարկված է, որ յուրաքանչյուր 6 (վեց) հատ սենյակը առնվազն կարող է առաջացնել 1.0 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ 500 ՀՀ դրամ յուրաքանչյուր սենյակի համար:

**13.**Առանձին գործող բաղնիքների, շոգեբաղնիքների համար /քառակուսի մետր/,քանի որ հաշվարկված է, որ յուրաքանչյուր 60 (վաթսուն) քառակուսի մետր ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1.0 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 50 ՀՀ դրամ):

**14.**Գյուղատնտեսական ապրանքների շուկայի համար /քառակուսի մետր/, քանի որ հաշվարկված է, որ յուրաքանչյուր 100 (մեկ հարյուր) քառակուսի մետր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1.0 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 30 ՀՀ դրամ):

**15.**Տոնավաճառների համար /քառակուսի մետր/, քանի որ հաշվարկված է,որ յուրաքանչյուր 300 (երեք հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1.0 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 10 ՀՀ դրամ):

**16.**Բանկերի, վարկային կազմակերպությունների համար՝ /քառակուսի մետր/, քանի որ հաշվարկված է, որ յուրաքանչյուր 40 (քառասուն) քառակուսի մետր ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1.0 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 80 ՀՀ դրամ):

**17.**Երկաթգծի կայարանների, ավտոկայարանների, օդանավակայանների համար՝ /քառակուսի մետր/, (մակերեսը վերաբերվում է բացառապես շինություններին) քանի որ, հաշվարկված է, որ յուրաքանչյուր 150 (մեկ հարյուր հիսուն) քառակուսի մետր ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1.0 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 20 ՀՀ դրամ):

**18.**Գործարանների, արտադրամասերի, արտադրական նշանակությամբ առանձնացված ստորաբաժանումների (ցեխ,վերանորոգման կետ և այլն) (բացառապես անվնաս արտադրական աղբի աղբահանության) համար.

**1)**մինչև 200 (երկու հարյուր) քառակուսի մետր արտադրական կամ սպասարկման մակերես ունեցող օբյեկտների համար, քանի որ հաշվարկված է,որ մինչև 200 (երկու հարյուր) քառակուսի մետր մակերես ունեցող արտադրական կամ սպասարկման մակերես ունեցող օբյեկտն ամսական առնվազն կարող է առաջացնել 5 (հինգ) խորանարդ մետր աղբ՝ 15000 ՀՀ դրամ,

**2)**200(երկու հարյուր) քառակուսի մետրը գերազանցող սպասարկման մակերես ունեցող օբյեկտերի համար՝ գերազանցող յուրաքանչյուր 1(մեկ) քառակուսի մետրի համար՝ լրացուցիչ, քանի որ հաշվարկված է,որ 200 (երկու հարյուր) քառակուսի մետր մակերեսը գերազանցելու դեպքում գերազանցող յուրաքանչյուր 100 (մեկ հարյուր) քառակուսի մետր արտադրական կամ սպասարկման մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 30 ՀՀ դրամ):

**19.**Առանձնացված պահեստային տարածքների համար /քառակուսի մետր/, քանի որ հաշվարկված է, որ յուրաքանչյուր 200 (մեկ հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 30 ՀՀ դրամ):

**20.**Թատրոնների, կինոթատրոնների համար՝ /նստատեղ/, քանի որ հաշվարկված է, որ յուրաքանչյուր 75 նստատեղ (յոթանասունհինգ) առնվազն կարող է առաջացնել 1(մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 40 ՀՀ դրամ):

**21.**Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների, ինչպես նաև պետական մարմինների առանձնացված գրասենյակների, սպասարկման կենտրոնների,շահույթ չհետապնդող կազմակերպությունների, դրանց առանձնացված ստորաբաժանումների և (կամ) գրասենյակների համար՝ /քառակուսի մետր/, քանի որ հաշվարկված է, որ 60 (վաթսուն) քառակուսի մետր ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 50 ՀՀ դրամ):

**22.**Ուսումնական հաստատությունների (բացի դպրոցներից) համար՝ /աշխատող և ուսանող/, քանի որ հաշվարկված է, որ յուրաքանչյուր 100 (մեկ հարյուր) աշխատող և ուսանող իրար հետ միասին կարող են առաջացնել առնվազն 1 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 30 ՀՀ դրամ):

**23.**Առողջապահական հիմնարկների, բացի առանձնացված ատամնաբուժարանների (բացառապես կենցաղային և ոչ կենցաղային աղբի, որն իր մեջ չի ներառում մասնագիտական գործունեության ընթացքում առաջացած թափոնները) համար /քառակուսի մետր/, քանի որ հաշվարկված է,որ յուրաքանչյուր 100 (մեկ հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1(մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 30 ՀՀ դրամ):

**24.**Ատամնաբուժարանների համար՝ յուրաքանչյուր 1 (մեկ) աթոռի համար, քանի որ հաշվարկված է, որ 1 (մեկ) հատ մասնագիտական աթոռ ունեցող ատամնաբուժարանները մեկ ամսվա ընթացքում կարող են առաջացնել առնվազն 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) խորանարդ մետր աղբ՝ 1500 ՀՀ դրամ:

**25.**Դպրոցների, այդ թվում գիշերօթիկ դպրոցների համար՝ /աշխատող և աշակերտ/, քանի որ հաշվարկված է, որ յուրաքանչյուր 100 (մեկ հարյուր) հոգի՝ աշխատող և աշակերտ, իրար հետ միասին մեկ ամսվա ընթացքում կարող են առաջացնել 1 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 30 ՀՀ դրամ):

**26.**Մասնագիտական դպրոցների (երաժշտական,սպորտ և այլն) համար՝ /աշխատող և սան/, քանի որ հաշվարկված է, որ յուրաքանչյուր 100 (մեկ հարյուր) հոգի՝ աշխատող և սան, իրար հետ միասին մեկ ամսվա ընթացքում առնվազն կարող են առաջացնել 1 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 30 ՀՀ դրամ):

**27.** Մանկապարտեզների համար (աշխատող և երեխա), քանի որ հաշվարկված է, որ յուրաքանչյուր 150 (մեկ հարյուր հիսուն) հոգի՝ աշխատող և երեխա, իրար հետ միասին մեկ ամսվա ընթացքում առնվազն կարող է առաջացնել 1 (մեկ) խորանարդ մետր աղբ՝ (հաշվարկել 1 քմ. 30 ՀՀ դրամ):

**28.**ՀՀ ԶՈՒ-ի և ՌԴ ԶՈՒ-ի զորամասերի և դրանց սպասարկող զինված ուժերի ենթակայության տակ գտնվող այլ կազմակերպությունների, հիմնարկների, ստորաբաժանումների համար /խորանարդ մետր/, վճարների չափը՝ համաձայն կնքված պայմանագրերի, որի հաշվարկման համար հիմք է հանդիսանում կատարված չափագրումները՝ 3000 ՀՀ դրամ:

## IV. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը

1. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը իրականացվում է Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և (կամ) Գյումրի համայնքի ավագանու որոշմամբ նման լիազորություններով օժտված օպերատորի կամ այլ կազմակերպության (կազմակերպությունների) կողմից (այսուհետ՝ գանձող):
2. Գանձողը ստանում է Գյումրու համանյքապետարանի կողմից տրամադրված աղբահանության վճարի կանխիկ գանձման համար նախատեսված անդորրագրերը, որի վերաբերյալ Գյումրի համայնքի համապատասխան բաժնի համակարգողը հաշվառում է կատարում:
3. Համակարգողն իրականացնում է գանձողի կողմից գանձված անդորրագրերի ընթացիկ հաշվառման, համադրման, անդորրագրերի մնացորդների և հայտի դեպքում անդորրագրերի նոր խմբաքանակների տրամադրման աշխատանքները:
4. Գանձողը, համակարգողից ստանալով անդորրագրերը, իրականացնում է անդորրագրերի պահպանման և ընթացիկ հաշվառման այլ աշխատանքներ:

## V.Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

1. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:
2. Աղբահանության վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

## VI.Այլ դրույթներ

1. Աղբահանության վճար վճարողների գրանցման մատյանի, աղբահանության վճարի կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են Գյումրու համայնքի ղեկավարի կողմից: